Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ

Նախագահական Հրամանագիր

Թիւ 2011-10-21

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Դրոշի վերաբերեալ

Ֆրանսա, Փարիզ, **21.10. 2011 թ.**

Համաձայն Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի 17 դեկտեմբեր 2004 թ. Հռչակագրի ա) Կետի Արեւմտյան Հայաստանը (Հայրենիք) պետք է ունենա իր պետական դրոշը, զինանշանը եւ օրհներգը:
Ելնելով սույն Հռչակագրի դրույթներից՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդը որոշեց հաստատել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նոր դրոշը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետութեան դրոշը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշը քառագույն է: Կենտրոնում երկու խորհրդանշաններն են՝ մուգ կապույտ ութանկյան մեջ՝ ծիրանագույն հավերժության ութաթեւ նշանը, որոնք իմաստավորում են տիեզերական ներդաշնակությունը:

Ութանկյան չորս գագաթներից՝ սկիզբ առնող մուգ կապույտ ճառագայթները ձգվում են չորս ուղղությամբ, ինչպես աշխարհի չորս ծագերը, մուգ կապույտը երիզված է ծիրանագույնով, դրոշի չորս հատվածները բաց երկնագույն են:

Դրոշը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, որպես քաղաքակրթութեան բնօրրան:

Մուգ կապույտը խորհրդանշում է հայ ժողովրդի հավերժականությունը:

Ծիրանագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի բանախոսությունը, արիականությունը եւ ստեղծագործ ազատության կենսասիրությունը:

Բաց երկնագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի լուսավորչականությունը եւ առաքելականությունը:

Սպիտակը խորհրդանշում է հայ ժողովրդի բարեպաշտությունը:

Դրոշի լայնութեան եւ երկարութեան չափերի հարաբերությունն է՝ 1:2 - ի: Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշի լայնութեան եւ երկարութեան հարաբերակցության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել նաեւ փոքր կամ մեծ չափի դրոշ:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշի նկարագրութեան գունավոր պատկերը ներկայացվում է սույն օրենքին կից ։

Անցումային դրույթներ

1. Մինչեւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Խորհրդարանի վերջնական ձեւավորումը սույն հրամանագիրն օրենքի ուժ ունի:

2. Սույն հրամանագրի ուժի մեջ մտնելու պահից Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի նախկին դրոշը հանձնվում է Արեւմտյան Հայաստանի Հայերի Ասամբլեային, որպես Ասամբլեայի խորհրդանիշ:

3. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշը կիրառութեան մեջ է մտնում հրամանագրի ստորագրման պահից:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի Նախագահ

Արմենակ Աբրահամեան